Հաստատում եմ՝
<u>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների</u>
<u>նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան</u>
(Պատվիրատուի ղեկավարի ...)

________________________

## Արձանագրություն N 6

«*ՀՀ ՏԶՆՆ- ԳՀԾՁԲ -18/14/1*» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
((Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Հայաստանի տնտեսության գերակա ոլորտների և առանցքային խնդիրների վերաբերյալ տեղեկատվական արշավի կազմակերպում և դրա շրջանակումտնտեսական թեմաներով տեղեկատվական-վերլուծական հեռուստահաղորդաշար պատրաստում և թողարկում)

ք. Երևան                                                                                13 օգոստոսի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| հանձնաժողովի նախագահ՝ | Մ.Կարապետյան |
| քարտուղար՝ | Մ.Գրիգորյան |
| անդամներ՝ | Մ.Եսայան, Ա.Խեչոյան, Ա.Չիլինգարյան, Վ.Քոչարյան |

**<u>1. Գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ՝</u>**

Գնահատող հանձնաժողովն որոշեց մեկ անգամ ևս ուսումնասիրել «Սփրին Գրուպ» ՍՊԸ-ի և «Հուսաբեր» ՓԲԸ-ի կոնսորցիումով հանդես եկող մասնակցի փաստաթղթերը , որի արդյունքում արձանագրվեց, որ վերջինիս գնային առաջարկը չի համապատասխանում իրավերով սահմանվող պահանջներին. մասնավորապես՝ գնային առաջարկը հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ միայն «Սփրին Գրուպ» ՍՊԸ-ի կողմից, իսկ «Հուսաբեր» ՓԲԸ-ին բացակայում է:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0***

**<u>2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝</u>**

2.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ *«Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»* մասնակցի հայտը մերժել:

2.2 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընթացակարգի երկու մասնակիցներն էլ մերժվել են, ընթացակարգը **հայտարարել չկայացած:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0***

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________ Մ.Կարապետյան

քարտուղար՝ ____________ Մ.Գրիգորյան

անդամներ՝ ____________ Մ.Եսայան

____________ Ա. Խեչոյան

____________ Ա. Չիլինգարյան

____________ Ա.Քոչարյան